

ԹԻԻ

ՆՈՐ
ՄԱՏԵՆԱՇԱՐ

1

Ա. ԳԻԻԼԽԱՆԳԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ
ԺԹ. ԴԱՐՈՒՄ

ՓԱՐԻԶ

1939

9(47.925)

9 - 67

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այսօր լույս ենք ընծայում Նոր-Մատենաշարի առաջին թիւը: Մեր նպատակն է լայն զանդւածների սեփականութիւնը դարձնել վերջին յիսնամեակում տեղի ունեցած մեր կեանքի վերաբերեալ զանազան կարեւոր էջերը:

Այդ իսկ պատճառով Նոր-Մատենաշարի նիւթ են կազմելու մեր ժողովրդի կատարած հերոսական դրագները, կարեւոր անհատ գործիչների կենսագրականները, մեր ժողովրդի, մեր երկրի ինչպէս եւ մեր հարեւանների մասին անհրաժեշտ ուսումնասիրութիւնները, ժամանակակից զանազան հասարակական խնդիրների լուսարանութիւնները եւ գաղութահայութեան վերաբերեալ այլ եւ այլ հարցերը:

Ձանք պիտի թափենք, որ դո՛նէ ամիսը մի անդամ լույս տեսնեն այս գրքոյկները եւ յատուկ նպատակ պիտի ունենանք, որքան կարելի է ընթերցողների համար մատչելի դարձնել թէ գրքոյկների բովանդակութիւնը եւ թէ արժէքները:

Նոր-Մատենաշարի առաջին համարը մենք նւիրեցինք «Ազգային շարժումների դրդապատմաբանները ԺԹ. դարում» նիւթին, նպատակ ունենալով ցոյց տալու, որ ժողովրդների մէջ տեղի ունեցած ազգային շարժումները պատահական բնոյթ չեն ունեցել եւ չունեն, ա:լ արդիւնք են պատմական անհրաժեշտութեան, եւ որ մեր յիսունամեայ ազգային շարժումները եզակի չեն, այլ կազմում են 19րդ դարում տեղի ունեցած Ազգային-Ազատագրական շարժումների օղակներից մէկը:

ՆՈՐ - ՄԱՏԵՆԱՇԱՐ



Գ

4166-89

1034

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԴՐԻԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ԺԹ.ՐԴ ԴԱՐՈՒՄ



Մինչև ժժ. դարը արեւմտեան Եւրոպայում մարդկային միտքը դուրս է երբէք այնքան չի խարխափել բազմատեսակ որոնումների մէջ, եւ տարուբերել անդադար հին սկզբունքներից դէպի նորը եւ նորից դէպի հինը, որքան մենք այդ տեսնում ենք ժժ. դարում :

Միջին դարերը շատ էին կաշկանդել մարդկային հանճարի ստեղծագործութիւնները: Աւատական կարգերը ստրկութեան շղթաներ էին պատրաստել ազատ մարդու համար: «Լուսաւորեալ ինքնիշխանութիւնը» դրել էր իր խնամակալութեան ներքոյ մարդու ամէն մի թռիչքը, նորա մտքի ամէն մի խոյանքը:

Մարդկային ազատ միտքը չէր կարող երկար մնալ այս կաշկանդումների մէջ եւ երբ նա թափ առաւ թոթափելու դարերի ստրկական կապանքները, նա ժայթքեց իրբեւ մի հրաբուխ եւ գերազանցօրէն տարերային

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ
ԺՅ.ՐԴ ԴԱՐՈՒՄ



Մինչև ժժ. դարը արեւմտեան Եւրոպայում մարդկային միտքը դուրս երբէք այնքան չի խարխափել բազմատեսակ որոնումների մէջ, եւ տարուբերել անդամար հին սկզբունքներից դէպի նորը եւ նորից դէպի հինը, որքան մենք այդ տեսնում ենք ժժ. դարում :

Միջին դարերը շատ էին կաշկանդել մարդկային հանճարի ստեղծագործութիւնները: Աւատական կարգերը ստրկութեան շղթաներ էին պատրաստել ազատ մարդու համար: «Լուսաւորեալ ինքնիշխանութիւնը» դրել էր իր խնամակալութեան ներքոյ մարդու ամէն մի թռիչքը, նորա մտքի ամէն մի խոյանքը:

Մարդկային ազատ միտքը չէր կարող երկար մնալ այս կաշկանդումների մէջ եւ երբ նա թափ առաւ թօթափելու դարերի ստրկական կապանքները, նա ժայթքեց իրրեւ մի հրաբուխ եւ վերադանցօրէն տարերային

ուժով ստքի տակ տւեց բոլոր այն հասարակակարգերի հիմունքները, որոնց վերայ կառչած էր հին աշխարհը: Սակայն այդ հնի աւերումը աւելի արագ կատարւեց, քան թէ նոր սկզբունքների ձեւակերպումը: Մարդկութիւնը զրկւելով հնից շունեցաւ մի ամուր կայան նոր հասարակակարգերի, որի վերայ վերջնականապէս կարողանար խարսխել իր նոր սկզբունքները. այդ էր պատճառը, որ Պրանսական Մեծ Ֆեդափոխութիւնից յետոյ, մենք տեսնում ենք մի տարօրինակ պատկեր: Մի կողմից մարդկութիւնը, թէպէտ անհաստատ, սակայն բուռն ցանկութեամբ ձգտում էր դէպի նորը, դէպի անորոշ երջանիկ ապագան, միւս կողմից, մնալով անբաւարար նոր սկզբունքներից, ցանկանում էր վերականգնել հինը, վերստեղծել կորցրածը: Մի կողմից մարդկային հանճարը քարոզում էր մարդու կատարեալ ազատութիւն, ճանաչել պետական ձեւը իրրեւ մի հանդուրժելի չարիք մարդու համար, միւս կողմից Նապօլէօնի լէգէոնները դուրս էին նետում Պրանսիայի սահմաններից՝ խլելու եւ ոտնատակ տալու ուրիշ ազգերի ազատութիւնը: Մի կողմից դրոճ էր տրւում կործանելու բռնապետութիւնները եւ հիմնելու սահմանադրական ազատ կարգեր, միւս կողմից ձեւակերպւում էր միապետների ձեռքով «Սրբագան դաշնադրութիւնը»՝ եւրոպայի սրբից դուրս վոնդելու համար ամէն մի յեղափոխական խոյանք եւ ամբաստնելու բռնապետների պահօրքը:

Բազմաթիւ են ժԹ. դարու մէջ հակադրական այդպիսի տենչանքները, որոնց վերայ չէինք կամենալ մանրամասն կանգ առնել:

Ահա այդ հակադրութիւններով լի ժԹ. դարն էր, որ վերջնականապէս փշրեց դիւնոսի շղթաները եւ նորա

համար բաց արաւ «ժողովրդապետութեան» հեռաւոր աշխարհը:

Այդ դարումն էր, որ դէմօսի կողքին իրենց իրաւունքները վերականգնել ջանացին իրաւագուրկ եւ հրպատակ ժողովրդները:

Իրաւամբ ժԹ. դարը դեմոկրատիայի յաղթանակի դար էր: Մէկ մէկ փշուր-փշուր էին լինում հին անմատչելի կուռքերը՝ ջնայելով իրենց գերագոյն դիմադրական ճիւղերին եւ նրանց գերիշխանութիւնը անցնում էր հասարակ ժողովրդին: Միաժամանակ դարմանալի տոկունութեամբ եւ խիղախութեամբ հրապարակ էին լինում ստրուկ ազգերը եւ գերմարդկային ճիւղերով խլում էին իրենց կորցրած իրաւունքները:

Մինչեւ ժԹ. դարը ոչ մի ժամանակ մարդկային կեանքի պատմութեան մէջ ազգային շարժումները այնպիսի թափ չէին առել, ոչ մի դարում այնքան ստրուկ ժողովրդներ չէին ձգտել եւ ստացել իրենց ազատութիւնը, ինչպէս մենք տեսնում ենք ժԹ. դարում, այն ժամանակ երբ բոլոր մեծ պետութիւնները ձգտում էին ընդլայնել իրենց սահմանները ի հաշիւ փոքրիկ եւ թոյլ ժողովրդների, երբ մեծ ժողովրդները մի առանձին ախորժակով էին ցանկանում կլանել փոքրիկ, անուժ եւ անկազմակերպ ազգութիւններին:

Անշուշտ բազմաթիւ են այն պատճառները, որոնք ժԹ. դարում նպաստեցին ազգային շարժումների ըստեղծւելուն եւ դարդանալուն:

Իւրաքանչիւր ժողովուրդ ունեցել է իր ուրոյն դըր-դապատճառները, որոնք թափ են տւել նորա հողուն եւ ողի ու եռանդ ներչնչել նրան, բայց երբ վերլուծութեան ենք ենթարկում այդ շարժումները բոլոր դըրդապատճառները, տեսնում ենք, որ նրանց մէջ կան մի

քանի հիմնական երեւոյթներ, որոնք ունեցել են իրենց խոր ազդեցութիւնը այդ շարժումների վերայ: Այդ հիմնական դրդապատճառների վերայ է, որ կ'ուղէինք կանգ առնել:

Պրանք շատ չեն. Ա. Բնական իրաւունքը (jus naturale) . Բ. Կապիտալիստական շարժումները. Գ. Մարդասիրական գաղափարների ազդեցութիւնը. Դ. Ընդօրինակութեան ձգտումը եւ մի քանի այլ պատճառներ, որոնց մասին առանձին կը խօսենք:

Կանգ առնենք այդ դրդապատճառների վերայ առանձին առանձին:

ԲՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆԻՔ

Բոլոր տեսակի հասարակական շարժումները կարող են տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ նախապէս գոյութիւն ունեն որոշ դադափարներ, որոնց շուրջը հնարաւոր է համախմբել դանազան անհատներ կամ մարդկային զանգւածներ:

Սակայն հեշտութեամբ չէ, որ մարդիկ յարում են մի որ եւ է դադափարի կամ միջոցում են միմեանց հետ դործակցել, այդ բոլորի համար անհրաժեշտ է երկար շատ երկար նախապատրաստական աշխատանք, մինչեւ որ հնարաւոր է լինում մարդու ուղեղի մէջ հասունացնել դադափարը. որից յետոյ միայն միաքը դառնում է կամք եւ մարդը շարժման մէջ է դնում իր բազուկները, իր ամբողջ կարողութիւնները. որքան սարգ եւ զիւրբմբանի են դադափարները այնքան հեշտութեամբ հնարաւոր է աւելի մեծ զանգւածներ համախմբել մի որ եւ է դործի շուրջը:

Այդ տեսակէտից իր խոշոր տեղը ունի բնական ի-

րաւունքը, որ նպաստել է թէ դեմոկրատիայի յաղթանակին եւ թէ ազգերի ազատագրման գործին: Նրա դադափարները սարգ էին եւ զանգւածները հեշտութեամբ էին ըմբռնում այդ հասանքի մտքերը եւ քարոզները:

Բնական իրաւունքը կարծես եկել էր արմատապէս կտրելու մարդուն հին կարգերից եւ հին հասկացողութիւններից:

«Պէտք է խորտակել այն բոլորը, ինչ որ հակառակ է բնութեան» — քարոզում էր բնական իրաւունքը: «Մարդը ծնւած է ազատ, բայց այդ ազատութիւնը կաշկանդում են բռնաւորները: Բնութեան մէջ չը կայ տէր եւ ստրուկ, բոլորը ծնւում են հաւասար, ուժեղները եւ ճարպիկները բռնանում են ազատ մարդու վերայ: Մարդը իբրեւ ազատ անդամ հասարակութեան, ինքնակամ է մտել այդ հասարակութեան մէջ, հետեւապէս նա ազատ է եւ կարող է ամէն բոլորին քննակամ կերպով թողնել այդ հասարակութիւնը եւ ոչ մի արտաքին ուժ չի կարող արգելիլ նորա այդ քայլը»: Այստեղից էր, որ սկիզբն առաւ «Հասարակական պայմանագրի» (Contrat social) դադափարը, որ մինչեւ ժ.Պ. դարու կէսերը տիրաբար իշխում էր մարդկային մտքին *):

Բնական իրաւունքը դաւանում էր, որ կառավարութիւնները, պետական ձեւերը, ներկայ հասարակակարգերը ոչ թէ արդիւնք են զանազան պատմական երեւոյթների, այլ ստեղծւել են մարդու ցանկութեամբ:

*) Ինչպէս յայտնի է, «բնական իրաւունք»ի գլխաւոր եւ կարեւոր ձեւակերպողներից էր Ժան-ժակ Բուսոն, որ ապրում էր 1712-1778 եւ որի գրւածքները մեծ ազդեցութիւն են բողի ֆրանսիական Յեղափոխութեան վերայ:

Մարդը ինքնաթիռ կերպով կազմելով որոշ հասարակահարզ, իր իրաւունքների մի մասը գիջել է յօղուտ հասարակութեան. այնպէս որ գերիշխանութիւնը (soveraineté) ոչ թէ պատկանում է միայեալին, այլ իրեն ժողովրդին, որը ամէն բոլոր կարող է եւ իրաւունք ունի խլելու միայեալից: Այստեղից էր, որ ծնունդ էր առնում այն զաղափարը, թէ պետական ձեւը մի սրբութիւն սրբոց չէ եւ միշտ կարելի է փոխել՝ հնի տեղ նորը դնելով: Ինչպէս տեսնում էք, այստեղ ամփոփւած են Փրանսիական Յեղափոխութեան բոլոր նշանաբանները «Նդրայրութիւն, ազատութիւն եւ հաւասարութիւն»:

Այդ նշանաբանները մինչեւ այժմս էլ ողբերգութեամբ են բոլոր շարժումների մասնակիցներին եւ յանուն «Նդրայրութեան, ազատութեան եւ հաւասարութեան» է, որ նրանք դուրս են գալիս կուէի դաշտը իրանց բռնաբարուած իրաւունքները յետ նւաճելու համար:

Բնական իրաւունքի մարտահրաւէրը բոլոր հալածւած եւ ճնշւած տարրերին անհետեւանք չի անցել եւ ստրուկ ազգերի համար: Բնական իրաւունքը հակառակ էր մարդկային բոլոր տեսակի ճնշումներին, նրա համար անընական էր, երբ մի ազգ իշխում է միւսի վերայ, «մարդիկ հաւասար են, չկայ բնութեան մէջ տէր եւ հպատակ, հետեւապէս չեն կարող լինել իշխող եւ ստրուկ ազգեր, այլ պէտք է լինեն հաւասար»:

Ահա թէ ինչպէս էր որոշում Ժ.Ը. դարի վերջերին գերմանական նշանաւոր փիլիսոփայ եւ քննադատ Հերդերը. «Ազգը բնութեան նոյնպիսի երեւոյթներից է ինչ որ բնտանիքը, միայն մի տարբերութեամբ, որ ազգի մէջ շատ նիւղաւորումներ կան»: Այսպիսով Հերդերն ընդունում էր, որ ազգի գոյութիւնը բնութեան հակառակ չէ, ուրեմն իբրեւ այդպիսին, նա պէտք է սպրի

եւ նրան ոչնչացնելն է բնութեան հակառակ: Բնութեան հակառակ էր ըստ Հերդերի եւ այն «անբնական երեւոյթը, երբ մի միապետ իշխում է միաժամանակ մի քանի ազգերի վրայ»:

Այդ անընական երեւոյթը պէտք էր վերացնել Հերդերի կարծիքով:

Այսպիսով Ժ.Ը. դարի շեմքին ծնունդ էր մի նոր եւ ուժեղ զաղափար, արդարութեան եւ նշմարտութեան գաղափար. իսկ արդարութիւնը եւ նշմարտութիւնը ուրիշն ու միջոցը բնութիւնն էր, որ տալիս էր պատրաստի գաղափարներ. ինչ որ հակառակ է բնութեան, պէտք է մաքաւել դրանց դէմ եւ ոչնչացնել, որովհետեւ այդ է արդարութեան պահանջը: Չուր էին ճշնում բռնապետները եւ իշխող ազնւականները ապացուցել, որ իրենց իշխանութիւնը աստուծային ծագում ունի, որ իրենք կառօքն Աստուծոյ է, որ իշխում են երկրի ազգերի եւ ժողովրդների վերայ: Այդ զաղափարները որ երկար դարեր լսելի եւ ընդունելի էին բոլորի համար այլեւս ոչ ոք չէր հաւատում, որովհետեւ դրանք պէմ էին արդարութեան: Յանուն այդ արդարութեան էր, որ մարտնչում էին իրաւազուրկ ժողովուրդների անկեղծ բարեկամները, նրանց լաւագոյն զաւակները. այդ արդարութիւնն էր, որ ողի էր ներշնչում թոյլ, անկազմակերպ փոքրաքանակ ազգերին, կուէի եղնելու երկրի ուժեղ բռնաւորների դէմ: Այդ կուէիները թէպէտ շատ անգամ վերջանում էին թոյլերի պարտութեամբ, բայց յաջորդ սերունդը շարունակում էր նախորդների արդարութեան դործը նոյն եռանդով եւ զոհարբութեամբ մինչեւ որ թուլանում էր բռնաւորը, ուժասպառ էր լինում անարդարութեան պաշտպանը եւ արդարութիւնը յաղթանակում էր տիրաբար:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ (ԴՐԱՄԱՏԻՐԱԿԱՆ) ՇԱՐԺՈՒՄԸ

Որքան բնական իրաւունքը մարտահրաւէր կարգաբարձունութեան եւ անարդարութեան դէմ, որքան նրա հեռեւորները մոլեղնորէն կոչէին «Մ'հ բնաւորին թող կորչեն մարդու ազատութիւնը կաշկանդողները»։ — Բոլոր այդպիսի կոչերը, մարտահրաւէրները դուրսէ կը մնային անհետեւանք եւ մարդը չը կարողանար ձեռք տել ազատութեան, երբ չը լինէին դրական պայմաններ, պատրաստի հող այդ գաղափարների գարգացման համար:

Այդպիսի դրական պայմաններից մէկը ներկայանում էր ԺԹ.րդ դարու կապիտալիստական շարժումը: ԺԸ.րդ դարու երկրորդ կէսից սկսած մեքսիկոյն արդէն մեծամեծ նւաճումներ էր կատարում արդիւնաբերութեան մէջ: Այդ ժամանակէն մարդկային մանուկ միտքը մեծամեծ յոյսեր էր կապել մեքսիկոյն հետ: Մեքենան է, որ վերջապէս պէտք է փրկէ մարդուն ստրկութիւնից: Մեքենան է, որ փոխարինելով մարդուն, պէտք է ազատէ նրան անպատուաբեր եւ փիզիքապէս աշխարհալի աշխատանքից, տալով նրան երջանկութիւն եւ անդորր կեանք, մտածում էին ԺԸ.րդ դարում:

Շնորհիւ այդ ձեւի մտածողութեան, մեքենայի գործադրութեան եւ տարածման նպատակով էին թէ՛ հասարակութիւնը — Ժողովուրդը եւ թէ՛ այն ժամանակէն կառավարութիւնները:

Պետութիւնների առաջ քաջել էին մեծամեծ ծախսերի պահանջներ. — Մնայուն դօրքը, նոր գաղութներ ձեռք բերելու տենչանքը, թաղաւորական պալատների բազմապիսի ծախսերը անդադար պահանջում էին մնայուն եւ շատ խոշոր եկամուտներ, իսկ այդպիսի եկա-

մուտներ հնարաւոր էր ստանալ երկրի արդիւնաբերութիւնից. հետեւապէս պետութիւնները շահագրգռւած էին նպատելու եւ գարգացնելու երկրի արդիւնաբերութիւնը, իսկ արդիւնաբերութիւնը զարգացնելու համար կամայ թէ՛ ակամայ պէտք է պարտաւորէին կապիտալիստներին արտօնութիւններ շնորհել եւ այդ էր պտուտը, որ այդ շրջանում պետութիւնները ամէն կերպ հովանաւորում էին բոլոր տեսակի արդիւնաբերական ձեռնարկները: Արդիւնաբերութիւնը զարգացնելու համար հիմնում էին յարմար առեւտրական կենտրոններ, ձեռում էին երկրի սիրտը հաղորդակցութեան ճանապարհներով, ոչնչացնում էին զանազան արհեստաւրական միութիւնները (համքարութիւնները), որպէս զի նրանք չխանդարեն կապիտալիստական ձեռնարկներին: Չը նայելով այդ բոլոր արտօնութիւններին, չը նայելով նորան, որ Մեքենան ամենամեծ նւաճումներն էր կատարում եւ արդիւնաբերութիւնը զարմանալի կերպով զարգանում էր, այնուամենայնիւ մարդկութիւնը չը վերկեց, ընդհակառակը ստեղծեց մի նոր ուժեղ դասակարգ իր ուրոյն պահանջներով եւ ձգտումներով եւ այդ դասակարգն էր, որ գիտակցելով իր դիրքը եւ դասակարգային շահերը, սկսեց կեղեքել ոչ իր դասակարգին պատկանող մարդուն:

Շատ շուտով արդիւնաբերողների — կապիտալիստների շքեղ դղեակների կողքին զարմանալի արագութեամբ շարեցին թշուառ աշխատաւորների կեղտոտ ու խոնաւ խրճիթները՝ իրբեւ անբաժան ուղեկիցներ արդիւնաբերական ձեռնարկների, սրանք բանւորներն էին, որ ինքնակամ եկել էին կեղեքելու արդիւնաբերողներից: Շնորհիւ այս նոր դրութեան ամբնագոր մեքսիկոյն ոչ միայն չը փրկեց եւ ազատագրեց մարդուն, այլ շրջ-

թայեց նրան ստրկութեան նորայատուկ կապանքներով :
Ճիշդ է, մեքենան չը փրկեց մարդուն եւ ստեղծեց
արդիւնաբերողների - կապիտալիստների դերը շխանու-
թիւնը հասարակութեան - ժողովրդի վերայ, սակայն
այդ շարժումը ունեցաւ իր փրկարար ազդեցութիւնը
մարդկային յառաջադիմութեան տեսակէտից : Այդ շար-
ժումը եկաւ ուժգնորէն եւ խիզախ, նա մարտի էր ելել
բոլոր հին կարգերի եւ հասկացողութիւնների դէմ եւ
անխնայօրէն փշուր-փշուր էր անում նրանց :

Միջին դարերից ժառանգութիւն մնացած աւատա-
կան կարգերն էին, որ ամենից առաջ կրեցին կապիտա-
լիզմի յարձակումները. աւատական կարգերը անկարող
էին կենսակցել այս նոր շարժման հետ, մէկը հին էր եւ
ուժասպառ, միւսը՝ թարմ եւ հուժկու :

Աւատականութիւնը՝ խաւարի դերը շխանութեան
արդիւնք էր եւ կապիտալիզմը եկաւ հիմնաւորապէս նո-
րան խորտակելու, խաւարը ոչնչացնելու, կապիտալիզ-
մը օգնութեան էր կանչել շողիին, շահագործում էր ե-
լեկտրականութիւնը, քաջալերում էր գիտութիւնը, յա-
նուն իր շահերի դարդացնում էր մեքենադիտութիւնը,
ստեղծում էր արդիւնաբերութեան նոր միջոցներ : Այս
բոլորը արդիւնք էին մարդու լուսամիտ մտքի : Աւա-
տական հասկացողութիւններով եւ կարգերով կառու-
վարող երկրները բնականաբար չը պիտի կարողանա-
յին մրցութեան ելնել այս նոր կարգերի հետ եւ այդ
պատճառով տեղի էին տալիս նրան :

Արդիւնաբերողները ելնելով իրենց իսկ սեփական
շահերից եւ չը բաւականանալով մի եւ նոյն պետական
սահմաններով, նրանք յաճախ ստնատակ էին տալիս
ամբողջ երկրագունտը նոր շուկաներ, նոր հարստու-
թիւններ փնտոելու համար, որովհետեւ արդիւնաբե-

րողը սկսելու համար մի որ եւ է ձեռնարկ, նա առաջ-
նորդւում էր միմիայն իր սեփական շահերով, նա մտա-
հոգւում էր միայն թէ ե՞րբ, որտե՞ղ կարող է մեծ շա-
հեր ապահովել. ո՞վքեր պէտք է լինեն աշխատաւորները,
ի՞նչ լեզուով են նրանք խօսելու, ի՞նչպիսի դաւանանք
ունեն նրանք, այդ բոլորը բնաւ չեն հետաքրքրում ար-
դիւնաբերողներին, նրան հետաքրքրողը իր սեփական
շահն է, այդ իսկ պատճառով նա բարձրացնում է այն-
տեղ իր դործարանը ուր որ շահ ունէ եւ ձեռնարկներ է
սկսում ուր որ կարող է : Ծնորհիւ այս դրութեան, ար-
դիւնաբերական ձեռնարկները մտնելով երկրազնդի հե-
տաւոր անկիւնները, տանում էին իրենց հետ թարմ հո-
սանք, որի շնորհիւ տակն ու վերայ էր լինում հասարա-
կական լճացած կեանքը եւ ստեղծւում էին նոր խնդիր-
ներ, նոր հարցեր իրենց ուրոյն լուսաբանութիւններով :

Մի երկրի արդիւնաբերութեան դարգացմամբ ըս-
տեղծւում եւ մեծանում էին քաղաքները. քաղաքների
մէջ առաջ եկած քաղաքացի դասը սկսում էր դեր խա-
ղալ եւ ազդեցութիւն ունենալ պետութեան քաղաքական
խնդիրների վերայ : Քաղաքների մէջ եւ քաղաքներ-
կից բարձրացող դործարանային ծխնելոյղի հետ, բարձ-
րանում էին դպրոցների նորանոր շէնքեր. դործարա-
նային սուղոցի հետ հնչում էր դպրոցական զանգակը.
այստեղից է, որ պէտք է ելնէին կապիտալիզմի համար
մարտնչող կրթւած գիւնւորներ, սակայն յաճախ այդ
դպրոցներից ելնում էր մի նոր սերունդ իրական մտա-
ւորականների, որը գիտէր ապրել եւ տառապել միմի-
այն ժողովրդի համար : Ժողովրդի ցաւերով ապրող եւ
տառապող այդ զգայուն տարրն էր, որ առաքելական
տոկուճութեամբ սկսում էր վարել ժողովրդի դատը,
կուրի ելնելով երկրի հօրներին եւ ուժեղների դէմ :

Գործարանային քաղաքները լցած դործ որոնող աշխատաւորութիւնը զարմանալի արագութեամբ կազմակերպուած էր՝ իր շահերը պաշտպանելու համար: Աշխատաւորական մութ նկուղներն էին թափանցում նոր եւ լուսամտի գաղափարներ. աշխատաւորը, որ երէկ գիւղի մէջ դեռ եւս չէր գիտակցում իր դրութիւնը, այսօր դործարանային քաղաքներում նա դուրս է գալիս իր անշարժ, եւ անտարբեր դրութիւնից եւ ճրգտումներ է ցոյց տալիս ուժեղ կերպով կազմակերպուած: Մեքենաների արագ եւ ներդաշնակ աշխատանքը, արդիւնաբերողների շքեղ գոգեակները եւ նրանց շաշա կենցաղը, աշխատաւորների թշուառ վիճակը, այդ բոլորը այնքան արագ հոգեկան փոփոխութիւն էին առաջ բերում աշխատաւորութեան մտապատկերների մէջ, որ նա անդուստր կերպով ձգտում էր կազմակերպուել: Նրան օգնութեան էին հասնում լաւագոյն մտաւորականները եւ ամէն կերպ նպաստում էին սրա յառաջդիմութեան:

Ծնորհիւ այդ շփումների կազմակերպուած աշխատաւորութիւնը հնարաւորութիւն է ստանում լսել կամ կարդալ իր մայրենի պատմութիւնը, ըմբռնել իր երկրի, իր հայրենիքի քաղաքական դրութիւնը եւ դառնալով գիտակից տարր, բնականաբար, նա եւս ձգտումներ պէտք է ունենար մասնակցելու իր հայրենիքի քաղաքական գործերին...

Այս բոլորից հետեւում է այն, որ մի երկրի արդիւնաբերական զարգացումը, հակառակ մինչեւ իսկ իրեն՝ արդիւնաբերողի ցանկութեան, առիթ է հանդիսանում միեւնոյն երկրի մէջ ազգային շարժումներ ծնուելուն եւ զարգանալուն:

ԺԹ. դարի ժողովրդների պատմութիւնը մեզ տեւ է բազմաթիւ օրինակներ, թէ ինչպէս շնորհիւ իրենց

երկրների արդիւնաբերութեան զարգացման, բազմաթիւ յետամնաց ազգեր են երեւան եկել, որոնք ժամանակի ընթացքում կարողացել են իրենց ուրոյն ազգային կեանքը եւ պետութիւնը ստեղծել. իրբեւ ապացոյց կ'ուզէինք մասնանշել մեր հարեւան կովկասեան քաղաքների վերայ. այս ժողովուրդը որ ոչ զիր, ոչ գրականութիւն ու լրագրութիւն ունէր, ԺԹ. դարու վերջին շնորհիւ արդիւնաբերական Բագւի, անակնկալօրէն վերադարձումի նշաններ ցոյց տւեց: Ծնորհիւ Բագւի էր, որ երեւան եկան առաջին թաթար մտաւորականները, Բագւի մէջ էր որ հրատարակեցին առաջին դրքոյկները, թաթարական շահերի պաշտպան թերթերը, Բագւի մէջ էր, որ ստեղծւեց թաթար ազգային առաջին կուսակցութիւնը եւ աշխտեղ էր, որ թաթար ժողովուրդը յայտարարեց թէ ինքը այլ եւս մի կրօնական համայնք չէ այլ ազգայնապէս կազմակերպուել ցանկացող մի ժողովուրդ... եւ այդ ճանապարհով ընթացաւ նորա պատմութիւնը:

Հայ, ռուս եւ եւրոպացի արդիւնաբերողները, որոնք բազմաթիւ բուրգեր էին բարձրացնում նախարար հողերի վերայ՝ երկրի սիրտը ճեղքելու եւ նորանոր հարստութիւններ գիղելու համար, երբէք չէին մտածում, թէ դորանով հնարաւորութիւն են ստեղծում թաթար ժողովրդի համար ազգայնօրէն զարգանալու, սակայն նոցա կառուցած գործարաններում էր, որ առաջին անգամ դարձնում էր թաթարի ազգային գիտակցութիւնը եւ նրանց կառուցած դպրոցների մէջ էր, որ դրել կարգալ էր սովորում ապագայ թաթար մտաւորականը...

Բաւականանալով արդիւնաբերութեան դերի վերաբերմամբ այս խորհրդածութիւններով, անցնենք միւս վաստերին:

68-99/11



ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

Գուցէ մարդկութեան մեծամասնութիւնը մնար ան-
ճար եւ անարդէած, դուցէ ոչ մի ուժեղ ձեռք չբարձ-
րանար հոգրներէ շահատակութիւնները սանձելու հա-
մար, եթէ Պրոմէթէոսի կրակի լոյսը չտարածէր խոնաւ
եւ մութ խրճիթները, չթափանցէր սոխտութեան մէջ
խարխափող զանգւածներէ մէջ: Վերածնութիւնը եւ Վե-
րանորոգչութիւնը անհետեանք չանցան ԺԸ․րդ եւ ԺԹ․րդ
դարու մարդուն համար․ նրանք հիմք ծառայեցին մար-
դասիրական-հումանիտեր գիտութիւնների, որոնց կենտ-
րոնը կազմում էր մարդը իր մտաւոր, բարոյական եւ
հասարակական կենցաղով:

«Պէտք է ազատել մարդուն սոխտութեան եւ նախա-
պաշարումների աշխարհից, նրա հոգու ազնուութեան,
նրա անձի արժանապատուութեան բարձրացման պէտք է
նպաստել ամէն կերպ» — մտածում էր մարդասիրական
գաղափարներով լցւած իրական մտաւորականը:

Ահա այդ գաղափարական մտաւորականութիւնն էր,
որ իջնում էր մութ եւ դորշ ամբոխի մօտ, լցւած մի
առանձին սիրով, նորան կարեկցելու, նորան նոր պատ-
գամներ տալու, նորա հոգին բարձրացնելու եւ ազնու-
ցնելու համար: Ողիմպոսի ընտրեալներին միայն սեփա-
կանութիւն համարւած գիտութիւնն ու գեղարեւոյթը,
մեկենասների եւ արքաների շքեղ պալատներում պա-
տըսպարւած գրականութիւնը այժմ իջնում էին ցած —
դէպի հասարակ ամբոխը՝ նորան մասնակից անելու
աշխարհի լուսաւոր մտքերին: Այս գաղափարական
մտաւորականութեան պէտք է համարել հիմնադիրը այն
մեծ ուժի, որին մենք կոչում ենք «հասարակական կար-
ծիք» որին վիճակւած է ամենախոշոր դերը խաղալ ներ-
կայ ժողովրդների եւ ազգերի կեանքում:

Այդ «հասարակական» կարծիքին էր դիմում մտա-
ւորականը, հասարակութեան խիղճն էր խայթում ա-
մէն անդամ, երբ թշուառութիւնը չէր դարմանուում եւ
երբ մարդկային արժանապատուութիւնը արհամարհուում
էր անխղճօրէն:

Գրականութիւնն էր, որ ամենից առաջ եւ ամենից
չատ ազդել էր կարողանում մարդկութեան բթացած
նեարդերի վերայ լցնում մարդուն կարեկցութեան ոգով:
ԺԹ․րդ դարու սկզբները եւ այնուհետեւ յաջորդաբար
երեւան եկան մի կողմից գեղարեստագիտներ եւ միւս
կողմից հասարակական գործիչներ, որոնք թողած ի-
րենց սեփական անձնական վիշտը եւ հոգսերը՝ սկսեցին
անձնատուր լինել հասարակութեան կարիքներին եւ ցա-
ւերին:

Թովմաս Գուքը իր հռչակաւոր «Շապիկ»-ի եր-
գերով, նկարագրում էր սրտաուռ կերպով աշխատա-
ւորի թշուա կացութիւնը, որը կարում էր շապիկը աղ-
քատութեան եւ կեղտի մէջ, սակայն սրտաղին կարում
էր նա ու երգում. «Հասնելու են արդեօք, ո՞վ հա-
րուստներ, նրա սրտամաշ երգի ձայները ձեղ»:

Չարլզ Դիկենսը երեւան հանելով թշուառութիւնը,
ծաղրի էր ենթարկում հասարակական անտարբերու-
թիւնը, նրա եսամոյութիւնը:

Լամբէն հրապարակ էր դալիս պաշտպանելու հա-
սարակ ժողովրդի շահերը, պահանջելով ընտրողական
լայն իրաւունքներ, որպէս զի ամէնքը կարողանան մօ-
տենալ քէտտուսին եւ ոչ միայն ընտրեալները:

Օվէն, Սէն-Սիմոն, Ֆուրիէ մարդարէական յափըջ-
տակութեամբ եւ սքանչացումով դժում էին մարդկային
երջանիկ ապագայի նոր պատկերներ:

Շնորհիւ դրանց եւ դրանց հետեւորդների՝ հասա-

բակ դասը դառնում է ուշադրութեան եւ խնամքի առարկայ շատերի կողմից: Հասարակ դասի — ժողովրդի լուսաւորութեան համար քաղաքացիութիւն եւ ստանում ժողովրդական դպրոցները՝ խաւարի մէջ լուսոյ շողեր մտցնելով:

Դա դեմոկրատիայի կատարեալ յաղթանակն էր, երբ դպրոցական դործը դարձաւ պետութեան գլխաւոր նագանից մէկը, պարտաւորցնելով նրան բանալ դպրոցներ անխտիր բոլորի համար, այդ քայլից յետոյ արդէն հեշտ էր պարտադիր ուսման խնդիրը, երբ բոլորը անխտիր կերպով մասնակից պէտք է լինէին լուսաւորութեան դործին:

Հասարակ դասի վերածնութեան դործի մէջ ահագին դեր են կատարել ժողովրդական դպրոցները: Դպրոցական ուսուցչի հետ գաւառի խուլ անկլեններն էին մտնում դրքերը, ժողովրդականացրած դիտութիւնը, աշխարհի բոլոր մասերից լուրեր եւ տեղեկութիւններ՝ բերող լրագիրները: Այն ինչ որ անհնար էր իրականացնել տասնեակ տարիների ընթացքում, ժողովրդական դպրոցների շնորհիւ հնարաւոր էր դառնում ամենակարճ ժամանակում:

Քանզելով խաւարի շղթաները, նախկին տղէտ զանգուածը այժմ դիտակցօրէն էր մօտենում իր դրութեան, նա կազմակերպւած կռիւ էր մղում յամառօրէն իր իրաւունքների պաշտպանութեան համար: Մարդասիրական գաղափարների ազդեցութեան տակ էր, որ մարդկութիւնը կարողացաւ վերջ տալ ամօթայի գերեվանաւորութեան... Սեւաւորքների ստրկութիւնից ազատագրելը, լայնատարած Ռուսաստանի մէջ դարերով գոյութիւն ունեցող նորոստրիութեան վերացումը միայն եւ միայն այս գաղափարներին են պարտական:

Այս գաղափարների շնորհիւ էր, որ մարդը ամօթ զգաց իր նման մարդուն արեւական վիճակի մէջ պահելու եւ ամէն ջանք դործ դրեց աղատագրելու այդպիսիներին:

Մարդասիրական-հիւմանիտէր գաղափարները ունեցան իրենց դերազանց ազդեցութիւնը սարսիկ եւ անշարժութեան մէջ մնացած ազգերի վերածնութեան գործում:

Տարւած մարդասիրական գաղափարներով՝ մշակոյթապէս բարձր ժողովրդների լուսագոյն գաւառները յաճախ սկսում են հետաքրքրել յետամնաց եւ մշակութապէս թոյլ ազգերի վիճակով: Զարմանալի մեծ սիրով եւ տոկոսեութեամբ նրանք սկսում են ուսումնասիրել յետամնաց ժողովրդների բանաւոր գրականութիւնը, նրանց պատմական քանկագիւն հնութիւնները, արքնում են վերատեղծել նորա պատմութիւնը, վերլուծում են նորա լեզուի տարբերը, կարգաւորում են քերականութիւնը, մի խօսքով այն, ինչի որ իրենց ժողովուրդը հասել է դարերի ընթացքում եւ երկար փորձառութիւնից յետոյ: Շնորհիւ այդ դարերի ընթացքում ձեռք բերւած փորձառութեան, դիտութեան նւիրած անձնաւորութիւնները բանում են յետամնաց ազգերի համար քաղաքակրթութեան ուղիղ ճանապարհը: Սիրով հիւրընկալելով իրենց դպրոցներում յետամնաց ժողովուրդների բանիմաց գաւառներին, դրանով ստեղծում են այդ ժողովրդի համար մտաւորական նոր սերունդ, որը կրթւելով եւ դարդանալով օտար միջավայրի մէջ, վերջ է վերջոյ հողեկան պահանջ է դրում նւիրել իր ժողովրդի վերածնութեան դործին, իր ուսերի վերայ վերցնել իր ժողովրդի յառաջդիմութիւնը եւ լուսաւորութիւնը:

Ուլքե՞ր էին, որ մոռացութեան դարաւոր փոշու տակից հանեցին Հելլադայի սլանծալի սլատմութիւնը, Հոմերի սքանչելի ստեղծագործութիւնը, Արիստոտէլի Պլատոնի փիլիսոփայութիւնները եւ ուրիշ բազմաթիւ սքանչելի երկեր: Յոյն ժողովուրդը եւ ոչ մի մաս ունէր այդ դործում, նա տառապում էր տաճկական լծի տակ եւ վաղուց մոռացել էր իր փառաւոր անցեալը: Օտարներն էին, որ աւելի շատ սիրեցին յունական ըստեղծագործութիւնները, քան իրենց սեփականը: Ուլքե՞ր սկսեցին ուսումնասիրել մեր սլատմութիւնը, վերջստեղծել մեր քերականութիւնը, հայ լայն դանդաճաների սեփականութիւն դարձնել հայ սլատմագիրների երկերը. դրանց մեծամասնութիւնը կամ օտարներ են եղել եւ կամ օտար երկրներում կրթութիւն ստացած Հայեր:

Ո՞վ գիտէ թէ ինչ կը լինէր արեւելահայերի աշխարհիկ դրականութիւնը, եթէ Ստեփաննոս Նազարեանը, Խաչատուր Աբովեանը հնարաւորութիւն չունենանային դաստիարակելու օտար հորիզոններում: Միթէ՞ օտարի սլատմութիւնը սիրելու հետեւանքը չէր, որ մի Պարրորդի հետո երկիրներից բերեց հասցրեց Արարատի փէշերը, որ նա որդեգրէր հայ վիպագրութեան նախահայրը Խաչատուր Աբովեանին:

Մեր մամուլի մէջ՞ 19րդ դարու վերջերին, լուրջ հարց էր բարձրացել Քրդերի համար այբուբէն կազմելու եւ նրանց լեզուով գրքեր հրատարակելու համար: Մի՞թէ մարդասիրական գաղափարների ազդեցութիւնը չէր որ հայ ժողովուրդը մոռացած այն սոսկալի կոտորածները, որոնք 19-րդ դարու մեր ամբողջ սլատմութիւնն են կազմում, հայ մարդը մտածում էր զիր գտնել, մարդկային բարձր մշակոյթին մասնակից անել

տալ այդ բարբարոս ժողովրդին: Ուլքե՞ր են եղել, որ զրի են անցրել քրդական արձակ բանաստեղծութիւնները, նրանց ժողովրդական էպոսները եւ երգերը. դըրանք բոլորը եղել են կամ քրդերի բարբարոսութիւններից ընկած լաւագոյն հայեր եւ կամ Սասնոյ կամ Վասպուրականի լեռների ծերպերում թառած, զէնքը ձեռքին հայ ժողովրդին քրդական յարձակումներից սլաշտպանող հայ յեղափոխականներ:

Այժմս, հակառակ հայ ժողովրդի ծանր վիճակին, Հայաստանում մնացած մի բուռն եղիլի-քրդերի վերաբերմամբ ամենամեծ խնամքն է ցոյց տրւում: Հայաստանի քուրդը իր սեփական դպրոցն ունի, իր լրագիրն է հրատարակում, մինչեւ անգամ իր թատրոնն է ստեղծել Արագածի փէշերի վերայ:

Եթէ մի օր քաղաքակրթւի քուրդութիւնը, նա մեծ երախտագիտութեամբ պէտք է յիշէ հայ ժողովրդին, որին այնպէս անխիղճ կերպով բնաջինջ անել էր ցանկանում...

Շնորհիւ այս ձեւի աշխատանքների բարձրանում է ազգային գիտակցութիւնը լայն դանդաճների մէջ եւ աստիճանաբար սլատմական ազդերի կողքին երեւան են դալիս բոլորովին մոռացած կամ անյայտ ազդեր եւ իրենց իրաւունքներն են ուղում սլաշտպանել, մինչդեռ այդ ազդերի մասին իբրեւ ամբողջական միաւոր հարիւր կամ յիսուն տարի առաջ անկարելի էր խօսել:

ՆՄԱՆԻՆԵԼՈՒ ԶԱՆՔԵՐԸ

19-րդ դարի երկրորդ կիսին նշանաւոր Փրանսիական սօցիօլօգ Տարդը իր Լէ Լուա տը լիսիթասիոն գրքում պնդում էր, որ մարդկային բնութեան մէջ գոյութիւն ունի նմանողութեան օրէնքը, իսկ անգլիացի սլատմաբան Ճրիմանը աշխատում էր ապացուցանել թէ

դոյութիւն ունի ընդօրինակութեան օրէնքը: Կան արդեօ՞ք բնութեան մէջ այդպիսի օրէնքներ, թէ դրանք ենթադրութիւններ են Տարդի եւ Ֆրիմանի, զա մեզ համար կարեւորագոյն հարցերից չէ. փաստն այն է, որ ժողովուրդները միշտ միմեանցից ընդօրինակում են որոշ գրական ձեւեր, զեղարւեստական կամ քանդակագործական ոճ, պետական եւ վարչական սկզբունքներ, օրէնքներ, մի խօսքով այն ամէնը ինչ կարելի է ընդօրինակել եւ կամ որին կարելի է նմանել:

18-րդ դարումն էր, որ անդլիական սահմանադրական կարգերի մասին առաջին անգամ հասկացողութիւն ունեցան Եւրոպայի մայր ցամաքի ժողովուրդները եւ գերմարդկային ճիւղեր թափեցին իրականացնելու այդ կարգերը Եւրոպայի սրտում, որը աստիճանաբար դառնում է ամբողջ մարդկութեան սեփականութիւնը:

Դեռ երէկ էր, որ մինչ իսկ «Արեղակի եւ առիւծի» երկիր Պարսկաստանը, «ձաղող արեղակի» հայրենիք Չինաստանը թափ տալ կամեցան իրենց վրայից դարաւոր բռնակալական հին կարգերը եւ մի առանձին տենչանքով ուղում էին իրականացնել նոր-ասիականադրական կարգերը:

Այս բոլորը ապացուցում են, որ մարդը ենթակայ է յառաջադիմութեան – պրօգրէսի եւ նորա բանականութիւնը գիտակցօրէն կարողանում է իւրացնել այն բոլորը ինչ որ լաւ եւ անհրաժեշտ է, լինի դա ստեղծագործութիւն՝ իր բէ օտաք ժողովրդի:

Այդ է պատճառը, որ մշակոյթային ազդերի շարժումները, նրանց գերմարդկային ճիւղերը ազատ կեանք ստեղծելու համար, հին կամ նոր դարերի ժողովրդների պատմութիւնը այդ բոլորը առանց հետեւանքի չեն անցնում ժողովրդների համար: Բոլոր այդ

երեւոյթները թողնում են իրենց ազդեցութիւնները հեռաւոր կամ մօտաւոր հարեւան ժողովրդների վերայ:

Լուսաւոր մտքերի, յեղափոխական շարժումների ալիքները առանց արդելքի անցնում են բոլոր ծովերի եւ ցամաքների վերայից. ոչ լայնատարած ովկէանոսները, ոչ անջատող պետական սահմանները, ոչ սահմանապահ ուժեղ զօրքերը, ոչ սպառազինւած սահմանակից ամբուլթիւնները կարող են կանգնեցնել այդ հոսանքը, նա ներս է խուժում զարմանալի արաբութեամբ յեղյեղելու ժողովրդների քարացած կեանքը, նորան նոր ուղիներ ցոյց տալու, նոր պատգամներ հաղորդելու:

Երբ ուսական ցար Ալէքսանդր Ա.ի յաղթական զօրքերը մտան Փարիզ՝ միանդամայն արմատախիչ անելու յեղափոխական շարժումները Եւրոպայի սրբալից, երբ շնորհիւ այդ զօրքերի կնքում էր այսպէս կոչւած «Սրբազան դաշնագրութիւնը» ամբասնդելու համար եւրոպական միապետների դահոյքը, նոյն այդ զօրքի մտաւորական տարրերը ենթարկում էին Փարիզի ազատ մտքերին ու մտաւորապէս կերպարանափոխւած վերադարձան իրենց հայրենիք Ռուսաստանը:

Այդ մտքերի ազդեցութեան տակ էր, որ Ռուսաստանի մայրաքաղաքում 1825 թ. դեկտեմբերի 14-ին, յեղափոխութիւնը զսպող դիւտորականութիւնը, ինքը յեղափոխութիւն անել փորձեց, որը յայտնի է դեկապրիստների շարժում անունով, որը իրապէս մանրանկարն էր փարիզեան յեղափոխական օրերի:

Բուլղարական յեղափոխութիւնը, բուլղար ժողովրդի ազատագրական շարժումները, նրա պատմութիւնը ամենամեծ ազդեցութիւնն են ունեցել մեր յեղափոխական շարժումների վերայ. Բուլղարիայի ազա-

տաղբեւին էր թրքական լծից, որ այնքան մեծ հաւատ էր ներշնչում հայ յեղափոխականներին անսահման դու- հարերութեամբ կուրի ելնելու Թուրքիայի դէմ յանուն հայութեան ազատագրման:

Մեր շարժումները աղղեցութեան տակ էր, որ քը- նէածութիւնից շարժել սկսեց պարսիկ ժողովուրդը, որի ոչ միայն մտաւոր այլ եւ Ֆիդիքական առաջնորդ- ներից կարեւորադոյնը Եփրեմն էր իր յեղափոխական ընկերակիցներով:

Մեր շարժումները Տաճկաստանում ստեղծեցին ե- րիտասարդ Թիւրքերի մտաւոր հոսանքը, որոնք վերջը այնքան լրբութեամբ եւ անխղճօրէն վարեցին իրենց ուսուցիչներէ հետ:

Մեր շարժումները դերպանց աղղեցութիւն են ու- նեցել Անդրկովկասի մեր հարեւան Թաթարները վե- ռայ, որոնց «Մուսաֆադ» կուսակցութեան կազմող- ները, իրենց իսկ վիպութեամբ Հ. Յ. Դաշնակցու- թեան աշակերտներն էին եւ ամէն կերպ աշխատում էին «Մուսաֆադ»ի ծրագիր-կանոնադիրը նմանեցնել Դաշնակցութեան:

Բազմաթիւ օրինակները մեզ շատ հեռու կը տանեն, փաստն այն է, որ այդ աղղեցութիւնը կայ եւ ոչ ոք չի կարող հերքել ազդելու, նմանելու ընդունակութիւնը մարդկային կեանքում. ազդում են ոչ միայն անհատ- ները այլ եւ ամբողջ ժողովուրդները:

Հետեւեցնելով այդ փաստերից պէտք է ընդունենք, որ մի ժողովրդի մէջ տեղի ունեցած այս կամ այն շար- ժումը հեշտ կերպով կարող է ազդել իր հեռաւոր կամ մօտաւոր հարեւանի վերայ: Եթէ մի ազգ բարձրացնում է իր մայրենի լեզուի գրականութեան, գեղարւեստի զարգացման խնդիրներ, եթէ նա կուրի է մղում իր աղ-

դային մշակոյթի պահպանման կամ զարգացման հա- մար, այդ ամէնը պէտք է աղղեն բոլոր այն աղղերի վերայ, որոնց մշակոյթային յառաջադիմութիւնը գտնուում է նոյնպէս կաշկանդած դրութեան մէջ. բնա- կան է, որ այդպիսի աղղերի մէջ եւս ցանկութիւն առաջ կը դար հետեւելու իրենց ուսուցիչներին: Երբ մի ճընշ- ուած ազգ կուրի է մղում բռնաւորի դէմ, իր ազատագրա- կան կուրը վարակում է եւ միւս ստրուկ ժողովուրդնե- րին՝ կուով խլելու իրենց ազատութիւնը: Դրանով պէտք է բացատրել, թէ ինչպէս 19-րդ դարում այնքան արագ միմեանց յաջորդեցին ազատագրական կուրները՝ թօթափելու բռնաւորի լուծը եւ շատ աղղեր հասան իրենց նպատակին:

ԿՐՕՆԻ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ

Գլխաւորապէս վերը յիշած դրդապատճառներն էին, որոնք մեծ դեր խաղացին ԺԹ. րդ դարում աղղերի շարժ- ման պատմութեան մէջ: Սակայն դրանց պէտք է կցել եւ մէկը, որը նոյնքան, գուցէ եւ աւելի մեծ դեր է խա- ղացել նամանաւանդ Տաճկաստանի լծի տակ տառապող աղղութիւնների կեանքում, դա կրօնական խնդիրն էր:

Եւրոպայում կրօնական հարցերը, որ այնքան մեծ դժբախտութիւնների առիթ էին հանդիսացել Միջին Դարում, ԺԼ. եւ ԺԹ. դարերի ընթացքին աստիճանա- բար կորցնել սկսեցին իրենց բարբարոսական բնոյթը եւ կրօնով տարբեր ժողովրդները սովորել էին միմեանց հաշտ աչքով նայելու, սակայն բնաւ այդպէս չէր Տաճ- կաստանում — մահմեդական այդ բռնակալական երկ- րում. այնտեղ կրօնական հալածանքները շարունակե- ցին բոլոր ժամանակ մեծ շնականութեամբ եւ բարբա- րոսութեամբ:

Եւ իրապէս մահմետական Տաճկաստանը մի անէծք

եղաւ Տաճկաստանում ապրող քրիստոնեաների համար :

Մահմեդական կրօնը, որ սնւել էր Արաբիայի կիզիչ արեւոյ եւ անապատի բարձրոյ, եօթներորդ դարի սկիզբին դուրս թուաւ իր աւագոտ հայրենիքից՝ հուր եւ մոխիր սփռելու բոլոր այն երկրները վերայ, ուր մահմեդականութիւնն էր բացակայում :

Մենք՝ հայերս եւ բիւզանդական կայսրերն անզօր էինք այդ արշաւի առաջին առնելու :

Մահմեդական կրօնի հետեւորդները նւաճումներ էին անում անաբդել կերպով : Չուր էին տքնում Եւրոպայում կազմակերպելու «Սաչակրաց արշաւանքներ» : Նոր կրօնի հետեւորդները այնքան էին դօրացել, որ 1453 թւին վերջնականապէս խորտակելով բիւզանդական կայսրութիւնը, նստեցին Բօսֆորի ափերին հիմնաւորապէս : Այնուհետեւ հաստատուած Եւրոպայի եւ Ասիայի սըրտում, իբրեւ մի չար ոգի՝ սպառնում էին վրդովել Եւրոպայի խաղաղութիւնը : Անհամեմատ սոսկալի եղաւ այն քրիստոնեաների դրութիւնը, որոնք մնացին հպատակ այդ բռնակալ եւ բարբարոս պետութեան : Նրանք, որ հազիւ կարողացել էին ազատուիլ արարների, սելջուկների, թաթարների անօրինակ ջարդերից, այժմ փշրուած եւ ծւատուած՝ անյուսօրէն պէտք է կրէին մի նոր բռնաւորի լուծ, որ դերազանցել էր կամենում իր նախորդներին իր ոճրագործութիւններով :

Տաճկաստանի պատմութիւնը անվերջ ոճրագործութիւնները մի շարան է, սկզբից մինչեւ մեր օրերը :

Հպատակ քրիստոնեայ ժողովրդները շատ անգամ են համարուել օրէնքի դուրս, քրիստոնեաներին թալանելը, կոտորելը ոչ միայն չէ պատժուել այլ շատ անգամ քաջալերուել է սուլթանների, մահմեդական կրօնաւորների կողմից . յաճախ այդ բոլորը համարուել է պետա-

կան անհրաժեշտութիւն եւ վերջ ի վերջոյ դարձել է երկրի ներքին քաղաքականութեան մի յատուկ սիւսեմ եւ բոլոր ժամանակ ամենայն ճշգրտութեամբ կիրաւուել է Տաճկաստանում :

Այսրելով այսպիսի մի բարբարոսական պետութեան ահամաններում, ուր օրէնքի տեղ միայն դադանութիւն եւ սոտր կամայականութիւնն էր թաղաւորում, բնականաբար քրիստոնեայ հպատակները պէտք է վարէին չափազանց կղզիացած կեանք, որպէս զի չը դրպէին իրենց տէրերի կրօնական դրացումները, որոնք ամէն ինչ, ինչ որ գեւաւորինն էր, համարում էին պիղծ եւ դուրս : Այդ կղզիացումը ունեցաւ երկու խոշոր հետեւանքներ Տաճկաստանում ապրող քրիստոնեաների համար : Մտախ՝ ընդմիջտ բաժանուեցին միմեանցից երկու կրօնական համայնքները, ոչ միայն առանձնացան միմեանցից քրիստոնեաների եւ մահմեդականների դիւրբը, այլ եւ քաղաքները մէջ թաղերը բաժանուեցին քրիստոնեաների եւ մահմեդականների միջեւ : Շնորհիւ այս դրութեան ամէն մի համայնք ապրում էր իր ուրոյն կեանքով երբեք չը հետաքրքրուելով եւ յարաբերութիւն չը պահպանելով միւս համայնքի հետ . շնորհիւ այս առանձնակի կենցաղի միմեանցից խորզանալը եւ միմեանց չը վստահելը աւելի եւ աւելի էր խոր արմատներ ձգում այս երկրում եւ այսպիսով անջատման վիճը աւելի էր մեծանում մահմեդական եւ քրիստոնեայ ժողովրդների միջեւ : Ներկորդ կարեւոր հետեւանքը այն էր, որ քրիստոնեաները լցւած դառն ատելութեամբ դէպի իրենց բռնակալ տէրերը, երբեք չը կարողացան եւ, բնականաբար, չէին կարողանալ յարմարուել դոյութիւն ունեցող պետական ձեւերի հետ, որոնք բոլորն էլ իրենց դէմ էին, չը կարողացան երբեք սիրել եւ իրենցը հա-

մարել Օսմանեան կայսրութիւնը եւ ընդհակառակը աշխատեցին ամէն ջանք զործ դնել թօթափելու համար իրենց ուսերից բարբարոսներէ լուծը:

Այդ շարժումները աւելի եւս ուժեղացան, երբ Տաճկաստանը իբրեւ պետութիւն իր նախկին հզօրութիւնը կորցրեց եւ եւրոպական պետութիւնները աւելի կազմակերպւած՝ թոյլ թուրքիայի մէջ իրենց սեփական շահերին հետամուտ լինել սկսեցին... Յաճախ թուրքիայի դժգոհ քրիստոնեայ ժողովրդները, անկարող լինելով ձեռք բերելու ցանկալի ազատութիւնը, դիմել կամ վստահացել են դրսի քրիստոնեայ պետութիւններին եւ նրանց աջակցութիւնն են խնդրել, որով հիմք էր դրել քրիստոնեայ պետութիւնների միջամտութեանը Տաճկաստանի գործերի մէջ:

Այդ ձեւի միջամտութիւնները, որոնք յաճախ սովորական կարեկցութիւնից այն կողմը չէին անցնում, շատ անգամ առիթ էին ծառայում, որ Տաճկաստանը աւելի եւս խտացնի հպատակ քրիստոնեաների վիճակը, որով աւելի էր խորանում վիճը քրիստոնեաների եւ մահմետական ժողովրդների միջեւ:

Այդպիսի մի բարբարոսական երկրում անհրաժեշտ չէին մեծ ջանքեր ազգային գիտակցութիւնը կամ յեղափոխական ոգին բարձրացնելու, ներշնչելու համար: Տաճիկ կառավարութիւնը ինքն էր որ, որ անդադար իր զործեւակերպով հրահրում էր կրակը եւ առիթ էր հանդիսանում նորանոր դժգոհութիւնների: Տաճկաստանում թէպէտ քրիստոնեայ ազգերը եղել են շատ անգամ ուրիշ խնդիրների վերաբերմամբ յետամնաց, սակայն ամէն բոլորով զգալով օտար լծի սոսկալի ծանրութիւնը, նրանք ամբողջովին — առանց դասի եւ դասակարգի խտրութեան — միացած իբրեւ մի ամբողջութիւն, թափել

են զերմարդկային ճիգեր, մղել են կեանքի եւ մահու կռիւներ, երբ մի յարմար առիթ է եղել, երբ փայլել է յուսոյ մի չնչին նշոյլ:

Այդ է պատճառը որ ժ.թ. դարի ազգերի ազատարական պատմութեան մէջ ամենից շատ տեղը պատկանում է տաճկական լծի տակ ապրող քրիստոնեաներին:

Յոյներն էին, որ անկարող լինելով տանել տաճկական սոսկալի լուծը, 1821 թւականին պարզեցին ապստամբական դրօշը եւ 1829 թւականին կարողացան ազատագրել գլխաւորապէս Անդլիայի եւ Ռուսաստանի միջամտութեան շնորհիւ:

1830 թւի Լոնդոնի կոնֆերանսն էր, որ նրանց ճանաչեց իբրեւ անկախ ազգ:

Սերբերը, որ համարեա բոլոր ժամանակ կիսանկախ դրութեան մէջ էին, գլխաւորապէս 19րդ դարու սկզբներին սկսեցին ձգտել լիակատար անկախութեան, ազատագրելու համար տաճկական զերիշխանութիւնից: 1878 թւականի Բեռլինի դաշնագրով նրանք դասուցին ազատ ազգերի շարքը:

Ռումաւնիան, որ դեռ եւս 14րդ դարից Տաճկաստանի վասալն էր եւ հարկ էր վճարում նրան, 1861 թւականին կարողացաւ ազատագրել այդ դրութիւնից եւ առաջին անգամ 1878 թւականին Բեռլինի դաշնագրով ստացաւ Ռումաւնիա անունը:

Բուլղարիան, որ թուրքիայի մի նասննդն էր, երկար յեղափոխական կռիւներից յետոյ 1878 թւի Բեռլինի դաշնագրով ճանաչեց վասալ պետութիւն Տաճկաստանի, սակայն կարճ ժամանակից յետոյ կարողացաւ ձեռք բերել իր լիակատար անկախութիւնը:

Կարելի էր յիշատակել Տաճկաստանից ազատագրւած եւ այլ ժողովրդների մասին, սակայն բաւականա-


նանք սրանով :

Ահա այս դրդապատճառներն էին, որոնք բարձրացրին հասարակ ժողովրդի ոգին, բաց արին նորա առաջ փակած բոլոր կառավարչական դռները, մասնակից առնել տւին նորան իր ազգային բոլոր խնդիրներին : Այժմ արիստոկրատ ղեկավարների կողքին բազմել են կարողանում նախկին ստրուկ գիւղացիները, իրաւազուրկ աշխատաւորները, նրանց ձայնը լսում են այժմ անվրդով կերպով իրենց նախկին տէրերը եւ շատ անգամ անմբռունչ կատարում են նրանց կամքը եւ թելադրանքները :

Այս դրդապատճառներն էին, որ շարժեցին ստրուկ եւ հպատակ ազգերին դէպի մարտադաշտը, բաց անելով նրա առաջ ազատութեան երջանիկ ապագան :

Այդ ազատագրական կռիւները դեռ եւս չեն վերջացել, ազատագրած ազգերի կողքին մէկիկ մէկիկ զարթնում են իրենց անտարբեր գրութիւնից ստրուկ ազգերը եւ անդուսպ տենչանքով նետում են անհաւասար եւ փոթորկալից կուռի, բախւելով նրանք բռնաւորի դրահապատ կրծքին՝ շատ անգամ փչուր փչուր են լինում եւ ուժասպառ վայր ընկնում, բայց կարծես այդ հարւածները անդօր են վերջնականապէս ջնջելու ազատութեան տենչանքը ստրուկների սրտից : Անցնում են տարիներ, ջախջախւած մարտնչողներին յաջորդում են նորերը, որոնք գօտեպնդւած նոր ուժերով՝ շարունակում են կրուիւր նոր կատաղութեամբ, նոր թափով եւ այսպէս անվերջ մինչեւ ստրուկը հասնում է իր ցանկալի ազատութեան :

Այս է տրամաբանական ելքը ազգերի շարժումների պատմութեան :



7034

« Ն Ո Ր Մ Ա Տ Ե Ն Ա Շ Ա Ր » Ի

ԳՐՔՈՅԿՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ԳԻՄԵԼ
Մոնմորանսի՝ Տիկ. Հայկանուչ Գիւլխանդանեանին
30. Rue Lucien Perquel-Montmorency (S. & O.)

Փարիզ՝ Պ. Լ. Գեւորեանին, խմբ. «Յառաջ»
17, Rue de Damesme Paris (13^e)

Մ. Պարսամեան Գրատուն
46, Rue Richer Paris (9^e)

Նոյն տեղերից կարելի է ստանալ
«ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ»ի
Ա. Հատորը (սակաւարքի) :



ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ Է ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
«ՆՈՐ ՄԱՏԵՆԱՇԱՐ»ի ԹԻԻ 2Ը.-
«ՅԵՂԱՓՈՈՍԿԱՆ ՀԱՅՈՒՀԻՆԵՐ»



ԳԻՆ ~~ՊԱՐ.~~ 2 ւալի

Երոպկ. պետութիւնների և փրնս. գաղութների համար
Երոպայից դուրս՝ 7 ՏՐԱՆՔ

Printed in France
ARAXES, IMP.,
46, RUE RICHER
PARIS